պարտեզին Ֆրանսիայի ապօրինի քաղաքականութիւնը և բացարձակապէս յայտնեցին, որ Ֆրանսիան ոչ թէ իր օգուտների համար է այնքան փող վատնում և անմեղ արիւն թափում, այլ մի քանի ընկերութիւնների և հարուստ գրպանների համար։

Հանրի-Րօշֆորը աւելի հեռու քշեց գործը ասելով՝ որ ֆրանսիական զօրքը ոչնչանում է ի զուր տեղը զանազան հիւանդութիւններից և կենսական մթերքների պակասութիւնից. բացի այս պարոնը յայտնի կերպով գրեց իր լրագրում, որ Տունիսում Ֆրանսիայի ներկայացուցիչ պ. Րուստանը կաշառքներ է կերել զանազան ընկերութիւններից այս պատերազմը առաջացնելու համար։ Ժողովուրդը սաստիկ վրդովվեց և խռովքով. կառավարութիւնը այս վրդովմը հանդարտացնելու համար պ. Րօշֆորին երդուեալների դատի ենթարկեց, բայց շատ սխալվեց. որովհետև երդուեալները արդարացրին Րօշֆորին բազմաթիւ փաստերի վրա հիմնվելով, իսկ կառավարութիւնը դատապարտվեց խայտառակված՝ Րուստանի անունով։ Րօշֆորը ցոյց տուեց գեղեցիկ կերպով, որ կառավարութեան գլուխ անցած մարդիկը միայն իրենց գրպանի հաշուապահականներ են։ Բուն հասարակապետական, արմատական և դէմօկրատ լրագրութիւնը ժողովրդի հետ միասին շնորհաւորեց սրտագին կերպով Րօշֆորին իր փայլուն յաղթութեան պատճառով։ Նամակս վերջացնում եմ տխուր լուրով, որ հայազգի պարոն Գիւլօրիէն, բաւականին երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ, մօտ օրերս կնքեց իր մահկանացու կեանքը։ Այս նամակը վերջինը կը լինի այստեղից, որովհետև պէտք է գնամ Անգլիա երկրագործական նպատակով։ Կաշխատեմ յաճախ թղթակցել սիրելի «Մշակին» զանազան տեղեկութիւններ տալով յարգելի ընթերցողներին, որոնց մաղթում եմ շնորհաւոր Նոր-Տարի։

Լանդին

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայի «Neue Freie Psesse» լրագրին, որ մինչև այժմ արգելված էր Ռուսաստանում, առաջիկայ տարվանից թոյլ է տրվում մուտքը Ռուսաստանի մէջ։

—«Մասիսի» մէջ կարդում ենք «Անգլիոյ դեսպան լորդ Դիւֆըրին երէկ Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ արտաքին գործոց նախարարութեան խորհրդական վսեմ. Տատեան Յարութիւն էֆէնդիի հետ, որ նոյն օրն ուրիշ դեսպանաց ևս շաբաթական այցելութիւններն ընդունեց։»

—Լրագիրները հաղորդում են, որ Թիւրքաց արդարադատութեան մինիստր Ջեվդէդ փաշան հրաման ստացաւ սուլթանից ոչ մի դէպքում չընդունել Ներսէս պատրիարքի հրաժարականը։

—«Русскiй Курьеръ» հաղորդում է որ Կ. Պօլսի մէջ սկսեցին աւելի էլ խիստ միջոցներ գործ դնել դպրոցների, գրքերի և մամուլի դէմ։ Ամեն օր լինում են խուզարկութիւններ տպարաններում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շվէյցարիայի Բէրն քաղաքի համալսարանում կան այժմ 385 ուսանողներ և 185 ազատ երթեւեկներ։ Ուսանողների թւում կան 28 ռուս կանայք և մի աւստրիացի օրիորդ, որոնք ուսանում են բժշկականութիւնը։ Կայ նոյնպէս մի գերմանուհի և մի ամերիկուհի, որոնք այլ գիտութիւններ են սովորում նոյն համալսարանում։ Այդպիսով 385 ուսանողների թւում 31 կանայք կան։

⁂

Առաջիկայ 1882 թվին Բերլինում կը հրատարակվեն 478 լրագիրներ և ամսագիրներ, որոնցից 43 հատ պաշտօնական կամ կիսապաշտօնական ուղղութիւն ունեն։ Մնացածներից 66 հատ քաղաքական թերթեր են, իսկ մեծամասնութիւնը նուիրված է գիտութեան, վաճառականութեան, արհեստների այլ և այլ ճիւղերին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ „Прав. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. գեներալ Չերնեվին իր խնդիրքի համեմատ արձակված է ներքին գործերի մինիստրի օգնականի պաշտօնից, մնալով սենատի մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 75½ կ., չորրորդ 90 ր. 87 կ., հինգերորդ 90 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր., երկրորդ 216 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 37 կ., երկրորդ 89 ր. 75½ կ., երրորդ 90 ր., 5 կ., ոսկի 7 ր. 89½ կ.։ Ռուսաց 1 րուբլ. Լոնդոնի վրա արժէ 25,3 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 213 մարկ, Փարիզի վրա 263 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՊՐՈՑ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ
կուրսով
Բ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑԻ

Վելիամինօվսկայա փողոց, տուն իշխան Ամատունու № 11. Ընդունելութիւնը և հարցաքննութիւնները պանսիօնէրների, կիսապանսիօնէրների և երթևեկ աշակերտների պատրաստական և ԱՌԱՋԻՆ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ դասատան կը սկսվեն յունվարի 2-ին, 1882 թվի, իսկ ուսումը յունվարի 7-ին։
1—4

ԿՕՆՖԵԿՏՆԵՐ ՀԱՅՁԻ ԴԷՄ ֆունտը 50, 70 և 90 կ., պերլօվայա կրուպա և սագօ 10 կ., ԽԱՒԻԱՐ 50 կ., մուրաբաներ 50 կ., ֆուֆայկա 2 ր. 50 կ., պօլօվիկներ 2 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր.։ Կօլմանի նըշըշտա 18 կ. ֆունտը։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։
1—5

Въ Редакцiи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНIЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорiя АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պնակներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէօշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական րէվօլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբօմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.։
32—60

Առաջիկայ **1882** թուականին Շուշի քաղաքում կը հրատարակվի հայերէն լեզուով գրականական-քաղաքական և ազգային ամսագիր

„ԳՈՐԾ“

„Գործի“ իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) և դուրս կը գայ իւրաքանչիւր ամսի վերջում։

Նախագիծ

ա. Ժամանակագրութիւն. տէրութեան կարգադրութիւններ։ Ռուսաց, արտասահմանի և կովկասի կեանքի նորութիւնները։
բ. Քննական յօդուածներ հայերի և նոցա դրացի ազգերի տնտեսական, բարոյական և մտաւորական դրութեան մասին։
գ. Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ—ինքնուրոյն և թարգմանական։
դ. Մատենախօսութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տպագրվող գրքերի, նոյնպէս այն օտար գրքերի, որոնց նիւթը հայոց ու կովկասեան կեանքից է առնուած։
ե. Քաղաքական տեսութիւն։
զ. Ներքին տեսութիւն։
Մանկավարժական ժամանակագրութիւն։
ը. Այլ և այլք։
թ. Իբրև յաւելուած եւրոպական և ռուսաց ընտիր հեղինակների գրուածների թարգմանութիւն։
Յայտարարութիւններ։

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն է ամեն տեղ . . 8 րուբլի
վեց ամսուանը . . . . . . 5 րուբլի
երեք ամսուանը . . . . . . 3 րուբլի

Վճարը կանխիկ է.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով․ Шуша. Симеону Ахумянъ, учителю армянской семинарiи.

Խմբագիր-Հրատարակիչ Սիմէօն Հախումեանց

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ.

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն
63—100

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ
Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

1	Բագրատունի՝ Տանն պատգամք. գինն է	25 կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.	50 „
3	Թզուկ, Թարգ. Տէր-Միքայէլեանցի.	30 „
4	Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խաթաբալա Սունդուկեանցի.	50 „
6	Զորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 „
7	Հայերէն լոտօ երեխաների համար.	50 „
8	Տէր-Ակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն..	60 „
9	Կոստանեանց՝ Գրաբար բայերի խոնարհումը.	25 „
10	Թագւորեան՝ փոքր լեզուագիտական հետազօտութեան.	50 „

Եւս ստացուել է Րստամի Տէր-Աբրահամեանցի 1882 թուի **ՕՐԱՑՈՅՑ**, գինն է 15 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի։

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մտնի մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. դորա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները Թեֆլիսում կարող են գրուել „Կենտրօնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բագու Բարեյսկիյ մագազինում, ինձ մօտ և „Մարդընկ“ գրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել։

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.։ Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում։

Հրատարակիչ Աբէլ Գ. Ապրեսեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ տարուայ հոկտեմբերի 1-ից բանալով ԵՐԵՒԱՆՈՒՄ գրավաճառանոց, նոյնպէս և ուսումնարանական, նկարչական և կազմարարական պիտոյից իրեղէնների խանութ, հրաւիրում եմ գրաւոր աշխատանքների հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և լրագրական խմբագիրներին (թէ հայ և թէ ռուս լեզուներով) ուղարկել ինձ վաճառելու իրենց աշխատութիւնները ԿՈՄԻՍԻԱՅՈՎ։ Իմ հասցէն. г. Эривань, Нерсесу Симеонянцу, магазинъ „Другъ Дѣтей.“ 10—10

Չայի և գինու ստաքաններ
[illegible]
144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների.
[illegible]
Ծախվում են մեծ և փոքր քանակութեամբ։

Дозволено цензурою, Тифлисъ 30 Декабря 1881 года.
Типографiя Главнаго Управленiя Намѣстника Кавказскаго.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна